



**ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ
2023**

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝

**Հումանիշ և հակահիշ բառերի
ուսուցումը ավագ դպրոցում:**

ԱՌԱՐԿԱ՝

Հայոց լեզու

ՀԵՂԻՆԱԿ՝

Հերիքնազ Գևորգի Աբրահամյան

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ

**ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝ «Երևանի Սոս Հովսեփյանի անվան
h. 115 ավագ դպրոց» ՊՈԱԿ**

Բովանդակություն

Ներածություն.....	2
1.1 Բառերն ըստ ձևի և իմաստի փոխհարաբերության. հոմանիշ և հականիշ բառեր.....	3
1.2 Հոմանիշ և հականիշ բառերի ուսուցման նպատակը և խնդիրները.....	8
1.3 Հոմանիշ և հականիշ բառերի ուսուցման մեթոդները ավագ դպրոցում.....	10
Եզրակացություն.....	18
Օգտագործված գրականության ցանկ.....	19

Ներածություն

Մեր աշխատանքում ներկայացրել ենք հոմանիշ և հականիշ բառերի ուսուցման նպատակները, խնդիրները, մեթոդներն ու ձևերը: Նախ տրվել են տեսական գիտելիքներ հոմանիշ և հականիշ բառերի մասին, մեջբերվել են ականավոր լեզվաբանների մտքերն ու սահմանումները, ինչպես նաև նշանավոր մանկավարժների մտքեր: Աշխատանքում առանձին-առանձին անդրադարձել ենք հոմանիշ և հականիշ բառերի ուսուցմանը 10-րդ, 11-րդ, 12-րդ դասարաններում՝ քննարկելով յուրաքանչյուր դասարանի առանձնահատկությունները, չափորոշյով սահմանված թեմաները և ուսուցման մեթոդները:

Ներկայացրել ենք դասագրքային առաջադրանքների օրինակներ, ինչպես նաև մեր կողմից օգտագործված այլ նյութեր, որոնք նպաստում են թեմայի յուրացմանը, բառապաշարի հարստացմանը՝ միաժամանակ աշակերտների մոտ հետաքրքրություն առաջացնելով:

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, 3 մասից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից: Առաջին մասը վերնագրել ենք «Բառերն ըստ ձևի և իմաստի փոխհարաբերության. հոմանիշ և հականիշ բառեր», 2-րդ մասը՝ «Հոմանիշ և հականիշ բառերի ուսուցման նպատակը և խնդիրները» դասարանում, 3-րդ մասը՝ «Հոմանիշ և հականիշ բառերի ուսուցումը ավագ դպրոցում»:

1.1 Բառերն ըստ ձևի և իմաստի փոխհարաբերության. հոմանիշ և հականիշ բառեր

Ճոխ է հայոց լեզուն, և առատորեն

կվարձատրվի նա, ով կոռուսումնասիրի այն:

Աստճո հետ խոսելու միակ լեզուն հայերենն է:

Մարդիկ իրար հետ հաղորդակցվում են խոսքի միջոցով: Խոսքը լինում է բանավոր և գրավոր: Բանավոր հաղորդակցումն ավելի իրավիճակային է, քան գրավոր հաղորդակցումը, քանի որ բանավոր հաղորդակցման ժամանակ խոսքը կարող է զարգանալ տարբեր կերպ, մինչդեռ գրավոր հաղորդակցումն ավելի համակարգված է:

Հաղորդակցման համար անհրաժեշտ է ունենալ զարգացած խոսք և հարուստ բառապաշար. որքան հարուստ է բառապաշարը, այնքան ճկուն է միտքը:

Հայերենն աշխարհի ամենահարուստ լեզուներից մեկն է. այն ունի 11.000 բառարմատ, որոնցից կազմվում են տասնյակ հազարավոր նոր բառեր: Այս բոլոր բառերն էլ հիմքն են մարդկանց հաղորդակցման և այդ հաղորդակցման միջոցով ամենատարբեր հարաբերությունների հաստատման:

Բանավոր խոսքը պատմականորեն նախորդում է գրավորին, ունի խոսակցական-արտասանական իրացում: Այն հիմնականում բարձրաձայն խոսողություն է. կարելի է ձայնագրել ու վերարտադրել, հաղորդել տեխնիկական միջոցներով (հեռախոս, ռադիո): Որոշակի է սրա պայմանավորվածությունը խոսքային իրադրությամբ, մասնավորապես՝ հաղորդակցվողների փոխհարաբերությամբ, հաղորդողի հոգեվիճակով, տրամադրությամբ: Լեզուն դրսևորվում է խոսքի միջոցով, ուստի չափազանց մեծ է լեզվի գործնական նշանակությունը:¹

Կապակցված խոսքի ձևավորման և զարգացման համար շատ կարևոր են բառապաշարի հարստացման ուղղությամբ տարվող աշխատանքները²:

Ցանկացած գրական երկ, ուսուցանվող կամ ընթերցվող թեմա բառապաշարի համալրման աղբյուր է:

¹ Լ. Բագումյան, Բանավոր խոսքի զարգացումը, «Մանկավարժական միտք», 2015, 4/59/, էջ 254:

² Վ. Ավագյան, Բառագիտության ուսուցումը դպրոցում, Երևան, 1989, էջ 3:

«Առհասարակ ուսուցման ողջ համակարգի նպատակը երեխայի ընդհանուր զարգացումն է, որն առաջին հերթին իրականացվում է խոսքի միջոցով և արտահայտվում է խոսքի մեջ: Հենց այդ առումով էլ աշակերտի խոսքի զարգացումը հայոց լեզվի դասընթացի կարևորագույն խնդիրներից մեկը պետք է դարձնել»³:

«Մայրենի լեզու սովորեցնելը երեք նպատակ է հետապնդում, առաջին՝ զարգացնել երեխաների այն բնածին, հոգեկան ունակությունը, որն անվանում ենք խոսելու ձիրք, երկրորդ՝ երեխաներին հասցնել մայրենի լեզվի գանձերի գիտակցական յուրացմանը և երրորդ՝ երեխաներին յուրացնել տալ այդ լեզվի տրամաբանությունը»⁴:

«Բառերն ու նրանց նշանակությունները ապրում են ոչ թե իրարից անջատ կյանքով, այլ անկախ մեր գիտակցությունից միավորվում են տարբեր խմբերի մեջ: Ընդ որում՝ խմբավորման համար հիմք է ծառայում նմանությունը կամ ուղղակի հակադրությունն ըստ իմաստի»⁵:

Այս դիտանկյունից էլ բառերը, ըստ ձևի և իմաստի փոխհարաբերությամբ, լինում են **հոմանիշ, հականիշ, համանուն, հարանուն**:

Մենք կխոսենք հոմանիշ և հականիշ բառերի մասին:

«Հոմանիշները,– ինչպես նշում է Ա. Մարգարյանը,– բնորոշվում են նույն կամ մոտ իմաստներով, որոնք, սակայն, միատեսակ պատկեր չեն ներկայացնում և զանազանվում են իմաստային տարաստիճանավորումներով»⁶:

Հոմանիշների դասակարգմամբ առաջինը լրջորեն զբաղվել է Մ. Աբեղյանը: «Հոմանիշ» գիտաբանի փոխարեն նա գործածել է միայն «նույնանիշ» և «համանիշ» անվանումները՝ նույնանիշի դեպքում նկատի ունենալով «նույն նշանակությունը ունեցող», իսկ համանիշի դեպքում՝ «նշանակությամբ նուրբ կերպով իրարից տարբերվող բառերը»⁷: Հետագայում, ինչպես արդեն նշել ենք, գործածվել է ընդհանուր՝ հոմանիշ անվանումը, իսկ համանիշներն ու նույնանիշները դիտվել են որպես հոմանիշության երկու առանձին տեսակներ⁸:

Մեկ այլ մոտեցմամբ հոմանիշները դասակարգվում են նաև լեզվական և խոսքային խմբերի:

«Լեզվական խմբի հոմանիշներն արդեն իսկ լեզվի մեջ գոյություն ունեցող բառերն են, որոնք կարող են գործածվել լեզվի տարբեր ոլորտներում կամ գործառական բոլոր ոճերում, իսկ խոսքային հոմանիշներն ունեն կիրառության սահմանափակ ոլորտ»⁹:

³ Ա. Տեր-Գրիգորյան, Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան, 1980, էջ 404:

⁴ Կ. Ուշինսկի, Մանկավարժական ընտիր երկեր, հ. 2, Երևան, 1950, էջ 742:

⁵ М. Покровский, Избранные работы языкознанию, Москва, 1959, с. 82.

⁶ Ա. Մարգարյան, Ժամանակակից հայոց լեզու: Բառագիտություն, Երևան, 1993, էջ 80:

⁷ Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965, էջ 154, 159:

⁸ Վ. Առաքելյան, Ա. Խաչատրյան, Մ. Էլոյան, Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 1979, էջ 201, Գ. Ջահուկյան, Էդ. Աղայան և ուրիշներ, Հայոց լեզու, Երևան, 1980, էջ 236:

⁹ Ա. Սուքիասյան, Հոմանիշները ժամանակակից հայերենում, Երևան, 1971, էջ 70:

Դրանք ունեն հեղինակային բնույթ, հիմնականում գործածվում են գեղարվեստական գրականության մեջ և կոչվում են անհատական կամ հեղինակային հոմանիշներ¹⁰:

Հոմանիշների ուսուցման ընթացքում պետք է ուշադրություն դարձնել դրանց խոսքային և լեզվական տեսակների տարբերակմանը: Կիրառական տեսանկյունից հոմանիշները դասակարգվում են նաև լեզվական և խոսքային խմբերի¹¹: Լեզվական հոմանիշները լեզվի մեջ գոյություն ունեցող բառերն են, որոնք կարող են գործածվել լեզվի տարբեր ոլորտներում կամ գործառական բոլոր ոճերում, իսկ խոսքային հոմանիշներն ունեն կիրառության սահմանափակ ոլորտ: Դրանք ունեն հեղինակային բնույթ, հիմնականում գործածվում են գեղարվեստական գրականության մեջ և կոչվում են անհատական կամ հեղինակային հոմանիշներ¹²:

Հոմանիշները՝ որպես միևնույն հասկացությունը տարբեր կողմերից արտացոլող լեզվական միավորներ, խմբավորվում են՝ ձևավորելով հոմանշային շարք, որի անդամները կարող են լինել միաբնույթ կամ տարաբնույթ (համադրական/հարադրական, դարձվածային/բառակապակցական և այլն)¹³: Յուրաքանչյուր հոմանշային շարք ձևավորվում է ընդհանուր միասնականացնող բաղադրիչի (հիմնաբառ) հիման վրա, որը հոմանշային շարքի տարբեր անդամներում լրացվում է միմյանց չբացառող, այլ մեկը մյուսին ճշգրտող կոնկրետ տարբերակիչ բաղադրիչներով՝ դրանով հանդերձ լրացնելով և հարստացնելով հիմնաբառը¹⁴: Վերջինս արտահայտում է շարքը միավորող բոլոր անդամների ընդհանուր իմաստը, ոճականորեն չեզոք է, գործառությամբ ակտիվ. այն նաև հասկացույթի (կոնցեպտ)անվանումն է: Հոմանշային շարքի անդամներն ունեն ինչպես ընդհանրություններ, այնպես էլ տարբերություններ: Ընդհանրությունը պայմանավորված է նրանով, որ հիմնաբառի ընդհանուր իմաստը տարրալուծված է հոմանշային շարքի յուրաքանչյուր անդամի մեջ՝ տարբեր համամասնություններով, օրինակ՝ գովել – գովաբանել, դրվատել, բարեբանել (գովասանական / խրախուսական խոսք ասել՝ չափի մեջ), գովերգել, երգել, ներբողել (ներբողի, երգի, ոտանավորի միջոցով). չափը կախված է իրադրությունից, բայց սովորական գովեստից ավելին է (փառաբանել, փառագոչել՝ փառք տալով, օրհներգությամբ գոհունակություն հայտնելով), թմբկահարել (հրապարակավ), շեփորել (կրկնելով), ջատագովել, երկինք հասցնել (հարկ եղածից ավելի), խնկարկել (շողոքորթելու նպատակով) և այլն: Իմաստային տարբերությունները խարսխվում են ոճական, կիրառական, նրբիմաստային հատկանիշների վրա, օր. խնդրել – աղերսել, թախանձել, պաղատել (սաստիկ խնդրել), հայցել (հետամուտ լինել, պահանջել) (գրք.), աղաչել, բերան (գլուխ՝ երես՝ վիզ) ծռել, դեմ ընկնել, ոտ ու ձեռ ընկնել (խսկց.), երեսը գոմշի կաշի անել, երեսը

¹⁰ Ա. Մարգարյան, Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 1990, էջ 13:

¹¹ Ա. Սուքիասյան, Հոմանիշները ժամանակակից հայերենում, Երևան, 1971, էջ 70:

¹² Ս. Էլոյան, Ժամանակակից հայերենի բառային ոճաբանություն, Երևան, 1989, էջ 140 -141:

¹³ Գործածվում են նաև բույս, փունջ տերմինները. մենք նախընտրում ենք շարք տերմինը: Տե՛ս նաև Ա. Մ. Սուքիասյան, Աշխ., Ե., 1999, էջ 126:

¹⁴ Հոմանշությունը հենց այս հատկությամբ է իմաստային աղերսներ ունենում իմաստային դաշտերի, ԲԻՍ-երի հետ:

բռնի երես շինել. ոտքերը լիզել (հարկ./գոհկ.), կողկողել, ողորթել (հնց.), առաջարկել, պահանջել, հրավիրել, ուզել, մուրալ, հարցնել (կիրո.), աղոթել (աղոթքի միջոցով), ոտքերն ընկնել (նվաստանալով), օձի պես գերեկնալ (քծնելով խնդրել) (նրբիմ.):

Հականիշներն իրար հակադիր իմաստ արտահայտող բառերն ու արտահայտություններն են, որոնք խոսքի մեջ գործածվում են տարբեր նպատակներով և ոճական տարբեր երանգներով: Լեզվում հականիշները գործածվում են այնպիսի հակադիր առարկաներ, երևույթներ, հատկանիշներ և այլն նշանակելու համար, որոնք իմաստով կարող են հարաբերակցվել: Ըստ Ա. Սուրբիասյանի՝ հականշության համար առաջին հերթին հիմք կարող է հանդիսանալ բառի բառային իմաստի մեջ որակական հատկանիշի առկայությունը¹⁵: Հականիշներն իրար հակադիր իմաստ արտահայտող բառեր են, որոնք ունեն հակադիր իմաստ և խոսքի մեջ ունեն ոճական որոշակի երանգավորում:

Հականիշները լինում են **բուն, բացարձակ կամ հակադրական և ժխտական**¹⁶: Բացարձակ կամ հակադրական հականիշները ցույց են տալիս տրամաբանորեն իրար հակառակ առարկա, հատկանիշ և գործողություն, որոնք միմյանց հակառակ իմաստ են արտահայտում, ինչպես՝ լավ-վատ, գեղեցիկ - սոգեղ, երկար-կարճ, մեծ-փոքր, սիրելի - ատել, արագ - դանդաղ և այլն: Ժխտական են այն հականիշները, որոնց շարքերի մեջ մտնող բաղադրիչներից մեկը ժխտում է, բացասում մյուսի ցույց տված հատկանիշի առկայությունը: Ժխտական հականիշները սովորաբար կազմվում են ան, ապ, տ, դժ, չ ժխտական նախածանցներով, ինչպես՝ ազնիվ - անազնիվ, վստահելի - անվստահելի, հավատարիմ - անհավատարիմ, հաճելի - տհաճ, գեղեցիկ - սոգեղ, բախտավոր - անբախտ - դժբախտ և այլն: Նշված գույգերի մեջ առաջինները ներկայացնում են առարկայի կամ հատկանիշի դրական, հաստատական բնեղը, նշված հատկանիշներով նրանց օժտված լինելը, երկրորդները արտահայտում են հատկանիշների բացակայությունը, չունենալը կամ ժխտումն ընդհանրապես:

Հականիշները կարող են լինել նաև **նույնարմատ և տարարմատ**: Առաջին դեպքում միևնույն արմատին ավելացնելով որևէ ածանց, ստանում ենք նույնարմատ հականիշների շարք: Ինչպես՝ գոհ-դժգոհ, հասուն-տհաս, բախտավոր - անբախտ, երջանիկ-ապերջանիկ, պայմանով, որ հականիշների շարքի մեջ մտնող բաղադրիչները միևնույն խոսքի մասերի պատկանելությունն ունենան, քանի որ միշտ չէ, որ միևնույն բառով և ժխտական ածանցներով կազմված բառերը հականիշներ են կազմում, ինչպես՝ տուն - անտուն, սեր - անսեր, վախ - անվախ, սիրտ - անսիրտ և այլն:

Հականիշներ են առաջանում նաև այն դեպքում, երբ միևնույն արմատով կազմվող բաղադրություններում դրական, հաստատական ներկայացնելու փոխարեն դրվում են հականիշ ածանցներ, ինչպես՝ ներգաղթ-արտագաղթ, համակրանք-հակակրանք, և այլն: Տարարմատ հականիշները բուն տրամաբանական կամ

¹⁵ Ա. Սուրբիասյան, Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 1999, էջ 134:

¹⁶ Ռ. Շալունց, Հականիշ բառերը ժամանակակից հայերենում, Երևան, 1979, էջ 45, Ս. Աբրահամյան, Հայոց լեզու: Բառ և խոսք, Երևան, 1978, էջ 117:

հակադրական հականիշներն են և կազմվում են տարբեր արմատներից, ինչպես՝ քարձր-ցածր, երկար -կարճ, սուտ-ճիշտ, արագ-դանդաղ, հաստ-բարակ, քանդել - կառուցել և այլն:

Լեզվի մեջ սովորաբար հականիշներ են կազմում այն բառերը, որոնք իրար հետ կարող են կապվել հակադիր կամ հակադիր հարաբերակցական հասկացություններով և արտահայտում են իրարով պայմանավորված հակադրական իմաստներ:

Հականիշները լինում են նաև **լեզվական և խոսքային**: Լեզվական են այն հականիշները, որոնք անկախ իրենց համատեքստային կիրառությունից, առանց խոսքային իրադրության արտահայտում են հակադիր իմաստներ և զուտ լեզվական իրողություններ են: Խոսքային կամ համատեքստային հականիշներ են կազմում այնպիսի բառեր կամ բառաձևեր, որոնք, առանձին վերցրած, լեզվական մակարդակում իրար հակադիր իմաստներ չունեն, բայց որոշ կիրառություններում այդ բառերը ձեռք են բերում իմաստային բազմապիսի երանգավորումներ, արտահայտում են հակադրական հարաբերություններ և խոսքի մեջ կազմում հականշային զույգեր: Այլ կերպ ասած՝ խոսքային մակարդակում հականշություն են ձեռք բերում ոչ միայն բացարձակ առումով միմյանց հակադիր իմաստ արտահայտող բառեր, այլև երբեմն նույնիսկ իրար նկատմամբ հակադրական հարաբերություններ չունեցող բառեր, բառաձևեր ու կապակցություններ: Ուրեմն, «խոսքային են այն հականիշները, որոնք, առանձին վերցրած, խոսքից դուրս միմյանց ուղղակիորեն հականիշ չեն և հականշություն են ձեռք բերում խոսքի մեջ՝ բառային որոշակի շրջապատում, որոշակի համատեքստերում»¹⁷:

¹⁷ Ս. Էլոյան, Ժամանակակից հայերենի բառային ոճաբանություն, Երևան, 1989, էջ 157:

1.2 Հումանիշ և հակահիշ բառերի ուսուցման նպատակը և խնդիրները

Բառերի ձևախմբաստային խմբերի ուսուցումը ունի գերազանցապես **գործնական նպատակ՝** հարստացնել աշակերտի խոսքը փոխաբերություններով, բազմիմաստ բառերով, համանիշներով, նույնանիշներով, հականիշներով և համանուններով: Դա նշանակում է, որ հիշյալ բառատեսակները անցնելիս մեծ տեղ պիտի հատկացնել բառերի կիրառական զանազան վարժություններին¹⁸: Ուսուցիչը ինքը պետք է ընտրի աշակերտների ինքնուրույն գործունեության համար առաջադրվող հանձնարարությունները՝ ելնելով աշակերտների **անհատական առանձնահատկություններից**: Դա նշանակում է, որ սովորողների ինքնուրույնությունը միայն աշակերտների անհատական աշխատանքների ընթացքում չի զարգանում: Ինքնուրույն գործունեության բազմաթիվ կարողություններ, հատկապես սեփական ուժերը գնահատելու և սեփական գործի կարևորությունը գիտակցելու կարողությունները, պետք է զարգացնել խմբային աշխատանքների միջոցով: Սովորողների ներուժին համապատասխան ուսուցչի տրված առաջադրանքների կատարման արդյունքում նրանք աստիճանաբար ձեռք են բերում ինքնուրույն ընթերցելու, ընթերցածի շուրջ մտորելու, եզրահանգումներ կատարելու կարողություններ: Հումանիշների և հակահիշների ուսուցումը կապակցված խոսքի յուրացման կարևոր պայման է: Մեծանուն մանկավարժ Ղ. Աղայանն այն կարծիքին էր, որ ոչ մի բառ երեխայի համար չպետք է մութ մնա. նա պետք է հասնի կարդացածի լրիվ ու ճիշտ յուրացմանը, որը նա կապում էր գննականության, բառի ու բառիմաստի համատեղ ըմբռնման հետ: «Մեզ հարկավոր է, որ աշակերտը ոչ միայն հասկանա բառերը և նոցա մասերը,- ասում էր նա,- այլև իրերը, առարկաները և նոցա մասերը, որպեսզի ոչ միայն կարողանա պատմել յուր լսածն ու կարդացածը, այլև նկարագրել իր տեսածը»¹⁹: Ըստ Աղայանի՝ աշակերտի բառապաշարը հարստացնելու համար անհրաժեշտ է նրա միտքը հարստացնել դրանց համապատասխան ընկալումներով ու գիտելիքներով: Մեծ մանկավարժների նշված տեսակետները արդիական են նաև մեր օրերում:

Հումանիշների և հակահիշների ուսուցումը նպաստում է աշակերտի **բառապաշարի համալրմանը**: Բառապաշարը երեխայի խոսքի, մտածողության ու աշխարհաճանաչողության զարգացման հիմքն է. ամեն ինչ մարդ ընկալում է բառերի մեջ կամ բառերի միջոցով, նույնիսկ շրջապատից ստացած անմիջական տպավորությունները, հույզերն ու ապրումները վերջին հաշվով կայունանում ու մտապահվում են բառային հիմքով:

Հումանիշների, հակահիշների և բառային այլ աշխատանքների ժամանակ լուծվում են հետևյալ խնդիրները.

¹⁸ 4 Ս. Գյուլբուրդյան, Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա, Երևան, 1987, էջ 137:

¹⁹ Ղ. Աղայան, Երկեր, հ. 4, Երևան, 1940, էջ 131:

1. բառիմաստի բացատրում, որի նպատակն անձանոթ բառի իմաստային մատչելի բացատրությունն է,

2. տեքստում եղած բառերի ձևաիմաստային դասակարգում, հոմանիշների, հականիշների, համանունների հայտնաբերում և դասակարգում, որի նպատակը բառիմաստի ըմբռնման խորացումն է,

3. սովորած բառերի կիրառում խոսքի մեջ²⁰:

²⁰ Ա. Տեր-Գրիգորյան, Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան, 1980, էջ 417


1.3 Հումանիշ և հակահումանիշ բառերի ուսուցման մեթոդները ավագ դպրոցում

Հումանիշ և հակահումանիշ բառերի ուսուցումը պետք է կազմակերպել մեթոդական հետևյալ շղթայով՝


1. Հումանիշի, հակահումանիշի առանձնացում, իմաստի բացատրում:
2. Հումանիշի, հակահումանիշի բառակազմական վերլուծություն:
3. Հումանիշի, հակահումանիշի գործածություն նախադասության մեջ:

Նախ ուսուցիչը աշակերտներին հրահանգում է առաջադրանքներ կատարելիս ընդգծել կամ դուրս գրել անձանոթ բառերը, որոնց բացատրությունը, հումանիշը, հակահումանիշը և բառակազմական վերլուծությունն արվում է ուսուցչի օգնությամբ: Ավագ դպրոցում նպատակահարմար է ունենալ հատուկ բառատետր, որի մեջ կան համապատասխան սյունակներ՝ վերը նշված քայլերն անելու համար:

Ես իմ բոլոր աշակերտներին հանձնարարել եմ ունենալ հետևյալ բառատետրից, որը շատ հարմար է բառերի շուրջ աշխատելու համար:



Գաղտնիք չէ, որ դժվար է հիշել այդքան բառ, ուստի նպատակահարմար է յուրաքանչյուր դասի ժամանակ հանդիպած անձանոթ բառերի հարցումն անել հաջորդ դասին և այդպես վարվել յուրաքանչյուր դասի ժամանակ՝ ամեն հաջորդ օրը հարցնելով նաև նախորդ օրերի բառերը: Հումանիշների ուսուցման ժամանակ հատկապես պետք է ուշադրություն դարձնենք ոճական իմաստներին: Աշակերտը հստակ պետք է հասկանա, որ հումանիշային շարքում եղած բառերը կարող են տեքստում հումանիշություն չարտահայտել, այսինքն՝ ոչ միշտ են հումանիշները փոխադարձ փոխարինելի: Դա պայմանավորված է նրանով, թե ինչ բառերի հետ են դրանք կիրառվում: Օրինակ՝




© Ներկրոն Ն., 2023

10-րդ դասարանում անցնում ենք հնչյունաբանություն և բառագիտություն: 2 բաժիններն էլ լի են անձանոթ բառերով: Ուղղագրություն անցնելիս օգտվում ենք Ռուբինա Նազարյանի «Մայրենին բոլորի համար» ձեռնարկից, որի մեջ մեծ թվով անձանոթ բառեր կան: Ուսուցման լավագույն մեթոդը տվյալ բառերը բառակազմական վերլուծության միջոցով ճանաչելն է, որն էլ օգնում է բառի իմաստը բխեցնելուն: Բացատրվում են բոլոր բառերը, կատարվում է բառակազմական վերլուծություն, նշվում են բառի հոմանիշներն ու հականիշները, դրանք կիրառվում են խոսքում՝ նպաստելով յուրացմանն ու իմաստի ընկալմանը:

Բառագիտությունն ուսումնասիրելիս անցնում ենք նաև հոմանիշ, հականիշ, համանուն և հարանուն բառերը, որոնք բառապաշարի հարստացման լավագույն տարբերակներն են: Դասագրքի առաջադրանքներից զատ տրվում են բառեր, որոնց հոմանիշներով պետք է գրեն կապակցված խոսք: Այս մեթոդը շատ է օգնում, որ կարողանան հոմանշային շարքից ճիշտ ընտրել իրենց անհրաժեշտ բառը:


Հականիշների ուսուցման ժամանակ ևս անհրաժեշտ է ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ հականիշները կարող են տարբեր բառերի լրացնելիս հականշային գույգ կազմել տարբեր իմաստ ունեցող բառերով: Օրինակ՝



Ավագ դպրոցի բոլոր դասարաններում այս մեթոդները կիրառելի են, քանի որ 3 դասարաններում էլ թե՛ գրականության, թե՛ հայոց լեզվի դասաժամերին անընդհատ հանդիպում են նոր ու անծանոթ բառեր, որոնք կարող են լինել նաև բարբառային բառեր կամ հայոց լեզվի զարգացման տարբեր փուլերին բնորոշ բառեր, որոնք բացատրվում են վերը նշված մեթոդներով: Ամասական 1 անգամ նշանակում ենք բառերի հարցման օր, որի ժամանակ բոլոր աշակերտները պատասխանում են մինչ այդ հանդիպած բոլոր անծանոթ բառերը՝ նշելով ոմանիշները, հականիշները և բառակազմական վերլուծության ենթարկելով:

Դասերի ժամանակ օգտագործում ենք նաև հետևյալ խաղաքարտերը, ինչպես նաև աշակերտները լուծում են հոմանիշների և հականիշների վերաբերյալ կազմված խաչբառեր:

ԳՏԻՐ ԱՎԵԼՈՐՐԸ



ՀԱԿԱՆՏԻՇՆԵՐ

30


ԳՏԻՐ ԱՎԵԼՈՐՐԸ



- 1 ջրավոր
- 2 կարծր
- 3 չունևոր
- 4 աղբար
- 5 թշվառ
- 6 ընչագուրկ

ՀՈՄԱՆՏԻՇՆԵՐ

30



Որտե՞ղ եք, հոմանիշներ՝

*Հուրափանջյուր փողոս ընտրիր
հոմանիշ բառերի մեկ զույգ:*

վախ	սարսափ	վրանգ
անհագ	անհաղթ	անկուշտ
ախռռ	ախոյան	ոտխ
ահավոր	անհամբեր	տոկալի
ավերիս	պարահար	աղեպ
միջօրե	աղջամուղջ	մթնշաղ
անտառ	պահեստ	ամբար



Այս քարտերն օգտագործելիս հիմնականում խմբային աշխատանքներ ենք անում, ինչը շատ է ոգևորում աշակերտներին, հետաքրքրություն է մտցնում դասագործընթացի մեջ, և վերջնարդյունքը լինում է գոհացուցիչ:

11-րդ դասարանում, բացի բառային հոմանիշներից, անցնում ենք նաև ձևաբանական և շարահյուսական հոմանիշներ: Այստեղ հիմնականում պահանջվում է հոլովաձևերի և կապական կառույցների իմացություն և փոխակերպումներ կատարելու հմտություն: Այս դեպքում օգտագործում ենք հիմնականում աշխատանք տեքստի շուրջ մեթոդը, որտեղ պետք է հնարավորության դեպքում փոխարինեն կապական կառույցները հոլովաձևերով և հակառակը, իսկ փոխակերպումների դեպքում ներգործական-կրավորական, պարզ-բարդ, ուղղակի-անուղղակի փոխակերպումներ պետք է անեն:

12-րդ դասարանում հիմնականում անցած նյութի կրկնություն է, որն էլ հնարավորություն է տալիս 0-ից սկսել և հիշել անցած նյութն ու սովորել բացթողածը:

Որքան բարձր է դասարանը, այնքան ավելի արդյունավետ է բառերի հետ աշխատանքը, քանի որ աշակերտն իր հետ յուրաքանչյուր տարի բերում է բառային պաշար, և բարձր դասարաններում ավելի հմուտ է լինում հոմանիշներ ու հականիշներ ներկայացնելու և դրանք հիշելու գործում:

Բառապաշարի հարստացման և խոսքը համեմելու տեսանկյունից անփոխարինելի դեր ունեն **դարձվածքները**:

Դարձվածքը կառուցվածքով երկու և ավելի բառերի կայուն, իմաստով ամբողջական, վերաիմաստավորված այնպիսի կապակցություն է, որը խոսքում վերարտադրվում է իբրև լեզվական պատրաստի միավոր:

Հայերենում կան դարձվածքներ, որոնք ունեն իրենց հոմանիշ և հականիշ դարձվածքը. սա ևս խոսում է մեր լեզվի յուրահատկության և հարստության մասին: Օրինակ՝

Հոմանիշ՝ Ականջի ճոթով լսել-ականջի ծայրով լսել
Ականջին հասնել-ականջն ընկնել
Երկու քարի արանքում-երկու կրակի միջև
Իր գուռնան փչել-իր էշը քշել
Իրար խառնվել-գլուխը կորցնել
Յոթ սարից այն կողմ-աչքից հեռու
Օձի լեզու թափել-սատանային բնից հանել
Կապը կտրած- թոկից փախած
Երկինք հանել-երկինք հասցնել
Անպոչ գդալ-ով հարս, նա հարսաքույր

Հականիշ՝ կրակի գին-ջրի գին

լեղին պատառվել-գայլի սիրտ ուտել
լեզու առնել-լեզուն բռնվել
աչքի լույս-աչկի գրող
խելքից պակաս-խելքի ծով
սատանայի ձին նստել-քատը փեշից թափել

Դարձվածքների ուսուցման ժամանակ անպայման հանձնարարվում է դրանք կիրառել նախադասություններում, որպեսզի աշակերտը կարողանա հստակ հասկանալ դարձվածքի արտահայտած փոխաբերական իմաստը:

Ուսուցման մեթոդներից արդյունավետ է նաև S2S տեխնոլոգիաների միջոցով անցկացվող դասը, որի միջոցով կարող ենք և խաղ-մրցույթներ անցկացնել բառերի շուրջ, և՛ հաղորդման դաս անել՝ բազում գծապատկերներ և օրինակներ ցույց տալով, և՛ հարցման դաս անցկացնել՝ աշակերտներին նախապես հանձնարարելով

պատրաստել հոմանիշների և հականիշների վերաբերյալ սահիկաշարեր,
հարցաշարեր կամ այլ հետաքրքիր նյութեր:

Եզրակացություն

Այսպիսով՝ ամփոփելով մեր հետազոտական աշխատանքը՝ կարող ենք եզրակացնել, որ

1. հոմանիշների և հականիշների դերն անփոխարինելի է լեզվում
2. հոմանիշներն ու հականիշները բառապաշարի հարստացման հարցում ունեն կարևոր նշանակություն
3. հոմանիշները փոխադարձ փոխարինելի են, բայց հաճախ կարող են չլինել այդպիսին
4. բառը կարող է հականշություն կազմել իրար հետ իմաստային կապ չունեցող բառերի հետ
5. հոմանիշ և հականիշ ունեն նաև որոշ դարձվածքներ

Հոմանիշ և հականիշ բառերի ուսուցման մեթոդներ են՝

1. քարտային աշխատանքը
2. բառատետրի ամենօրյա կիրառումը
3. յուրաքանչյուր դասին սահմանված քանակով հոմանիշների հանձնարարումն ու հարցումը
4. խաչբառները
5. ՏՀՏ տեխնոլոգիաների կիրառումը
6. տեքստային աշխատանքը
7. նախադասություններ և կապակցված խոսք կազմելը

Առաջարկ

Ցանկալի է, որ ինչպես տարրական և հիմնական դպրոցների դասագրքերում, այնպես էլ ավագ դպրոցի դասագրքերում լինի անձանոթ բառերի բացատրություն: Այն կարող է լինել կա՛մ էջի ներքևում, կա՛մ գրքի վերջին մասում: Դա իրականում շատ անհրաժեշտ և կարևոր է, քանի որ եթե աշակերտը տվյալ դասին ներկա չի լինում, բաց է թողնում անձանոթ բառերի բացատրությունը, իսկ դասագրքում լինելու դեպքում նա կարող է գտնել, գրել և սովորել բացատրությունը, նշել հոմանիշները:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աբեղյան Մ., Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965, 699 էջ:
2. Աբրահամյան Ս., Հայոց լեզու: Բառ և խոսք, Երևան, 1978, 418 էջ:
3. Առաքելյան Վ., Խաչատրյան Ա., Էլոյան Ս., Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 1979, 485 էջ:
4. Ավագյան Վ., Բառագիտության ուսուցումը դպրոցում, Երևան, 1989, 224 էջ
5. Բազումյան Լ., Բանավոր խոսքի զարգացումը, «Մանկավարժական միտք», 2015, 4/59/, 484 էջ:
6. Գյուլբուդաղյան Ս., Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա, Երևան, 1978, 326 էջ:
7. Էլոյան Ս., Ժամանակակից հայերենի բառային ոճաբանություն, Երևան, 1989, 182 էջ:
8. Մարգարյան Ա., Ժամանակակից հայոց լեզու: Բառագիտություն, Երևան, 1993: 252 էջ:
9. Ուշինսկի Կ., Մանկավարժական ընտիր երկեր, հ. 2, Երևան, 1950, 508 էջ:
10. Ջահուկյան Գ., Էդ. Աղայան և ուրիշներ, Հայոց լեզու, Երևան, 1980:
11. Սուքիասյան Ա., Ժամանակակից հայոց լեզու (հնչյունաբանություն, բառագիտություն, բառակազմություն), Երևան, 1999, 134 էջ:
12. Սուքիասյան Ա., Հոմանիշները ժամանակակից հայերենում, Երևան, 1971, 429 էջ:
13. Տեր-Գրիգորյան Ա., Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան, 1980, 562 էջ:
14. Покровский М., Избранные работы языкознанию, Москва, 1959. 82 էջ:
15. Ղ. Աղայան, Երկեր, հ. 4, Երևան, 1940:
16. Շալունց Ռ., Հակահիշ բառերը ժամանակակից հայերենում, Երևան, 1979, 180 էջ: